Պայմանագիր N 2014/0109

ք. Երևան

"09" հունվար 2014թ.

«Հայկական Ծրագրեր» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերությունը ի դեմս տնօրեն Աշոտ Խաչատրյանի, հետագայում՝ Կատարող մի կողմից, և Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն Փակ Բաժնետիրական Ընկերությունը ի դեմս գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանի, հետագայում՝ Պատվիրատու մյուս կողմից, կազմեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1 <u>Պայմանագրի առարկան</u>

Սույն պայմանագրի համաձայն Կատարողը Պատվիրատուի գլխավոր գրասենյակում ներդնում և սպասարկում է «ՀՇ-Ձեռնարկություն» համակարգը, հետագայում՝ Համակարգը, հետեւյալ կոնֆիգուրացիայով՝

- Հաշվապահություն
- Հիմնական միջոցներ
- Ապրանքանյութական արժեքներ
- Աշխատավարձ
- Կադրեր

1.1 Ներդրման աշխատանքներն են.

1.1.1 Համակարգի տեղադրում Պատվիրատուի գրասենյակում: Համակարգի նկարագրությունը բերված է սույն պայմանագրին կից Արձանագրություն 2 - ում:

1.1.2 Կատարողը խորհրդատվություններով օժանդակում է Պատվիրատուին՝ սկզբնական տվյալները Համակարգ մուտքագրելու հարցում:

1.1.3 Կատարողը և Պատվիրատուն համատեղ իրականացնում են համակարգի շահագործումը սկսելու համար անհրաժեշտ կարգավորումները:

1.1.4 Կատարողը ուսուցանում է Պատվիրատուի աշխատակիցներին՝ Համակարգի շահագործումը սկսելու նպատակով և կազմակերպում է շահագործման վերահսկումը ներդրման ժամանակ:

1.2 Սպասարկման աշխատանքներն են.

1.2.1 Համակարգի ընթացիկ շահագործման հետ կապված խորհրդատվություն:

1.2.2 Համակարգի լրամշակում և զարգացում կապված օրենսդրության փոփոխման հետ:

1.2.3 Համակարգի նոր ֆունկցիոնալ հնարավորությունների մշակում:

1.2.4 Համակարգի համապատասխանեցում նոր տեխնիկական և ծրագրային ապահովման պահանջներին:

1.2.5 Խորհրդատվություններ ավտոմատացման գործընթացի կազմակերպման, համակարգչային տեխնիկայի և ծրագրային համակարգերի հետ կապված հարցերի վերաբերյալ:

1.3 Ներդրման և սպասարկման ձևերն են.

1.3.1 Աշխատանքները իրականացվում են հեռահաղորդակցության (հեռախոսակապ, ինտերնետ, էլ.փոստ, հեռահար սպասարկում և այլն) և այցելությունների միջոցով:

1.3.2 Կատարողի կողմից Պատվիրատուին տրամադրվող ծրագրային թարմացումները փորձարկվում են նաև Պատվիրատուի կողմից: Փորձարկումները իրականացվում են Պատվիրատուի ներքին կարգերին համապատասխան:

1.3.3 Աշխատանքային հարաբերությունները համաձայնեցնելու նպատակով Պատվիրատուն և Կատարողը նշանակում են մեկական պատասխանատու: Պատվիրատուի Պատասխանատուն պետք է իրավասու լինի լուծել Համակարգի շահագործման հետ կապված բոլոր առանցքային կամ տարբեր ստորաբաժանումների վերաբերվող հարցերը: Կատարողի Պատասխանատուն ներկայացնում է Կատարողին Պատվիրատուի մոտ, կոորդինացնում է Կատարողի

այլ մասնագետների աշխատանքը: Կողմերը պարտավոր են նաև ապահովել պատասխանատուների փոխարինելիությունը:

1.3.4 Աշխատանքների ընթացքում կարևոր հարցադրումները, առաջարկությունները կամ այլ տեղեկությունները Կողմերը միմյանց են հայտնում գրավոր:

2 Պայմանագրի ժամկետները

2.1 Պայմանագիրը ուժի մեջ է մտնում հաստատման պահից և գործում է անժամկետ:

2.2 Ներդրման փուլը ավարտվում է ոչ ուշ քան 30.04.2014թ. եւ սկսվում է սպասարկման փուլը:

2.3 Պայմանագիրը կարող է լուծվել վաղաժամկետ Պատվիրատուի գրավոր պահանջով: Նման դեպքում Պատվիրատուն պարտավորվում է պահանջը Կատարողին ներկայացնել պայմանագրի լուծման օրվանից առնվազն 1(մեկ) ամիս առաջ:

2.4 Պայմանագիրը կարող է լուծվել վաղաժամկետ Կատարողի գրավոր պահանջով: Նման դեպքում Կատարողը պարտավորվում է պահանջը Պատվիրատուին ներկայացնել պայմանագրի լուծման օրվանից առնվազն 3(երեք) ամիս առաջ:

3 Պայմանագրի գինը և վճարման կարգը

3.1 Համակարգի, ներդրման եւ սպասարկման աշխատանքների արժեքները տրված է պայմանագրի անբաժան մասը հանդիսացող Արձանագրություն 1-ում: Համակարգի արժեքը 7 օգտագործման լիցենզիայի համար կազմում է 2,595,100 դրամ, ներդրման աշխատանքների արժեքը կազմում է 6,917,500 դրամ, ընդհանուր՝ 9,512,600 դրամ, ԱԱՀ՝ 1,902,520 դրամ, ընդամենը՝ 11,415,120 դրամ:

3.2 Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն վճարում է 5,600,000 դրամ: Ներդրման աշխատանքների ավարտից հետո, բայց ոչ ուշ քան 30.04.2014թ., եւ եթե ծրագիրը բավարարում է Արձանագրություն 2 - ում նշված պահանջներին, Պատվիրատուն վճարում է մնացած 5,815,120 դրամը:

3.3 Սպասարկման աշխատանքների դիմաց վճարումները կատարվում են Կատարողի կողմից պարբերաբար ներկայացվող հաշիվ-ապրանքագրերի հիման վրա՝ համաձայն սույն պայմանագրի անբաժան մասը հանդիսացող Արձանագրություն 1 – ի, որի հաստատումը Պատվիրատուի կողմից համարվում է նաեւ Կատարողի կողմից մատուցված ծառայությունների ընդունում: Պատվիրատուն 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում վճարում է Կատարողի կողմից ներկայացված հաշիվ-ապրանքագրում նշված գումարը:

3.4 Սպասարկման գները վերանայվում են տարեկան մեկ անգամ ապրիլի 1-ին: Գների աճը չի գերազանցի հետևյալ տոկոսների գումարը՝

- նախորդ տարվա համար պաշտոնապես հայտարարված սղաճ
- Կատարողի կողմից մշակվող Համակարգի և ընդհանուր ծրագրավորման ոլորտի տեխնոլոգիական բարդացման տոկոս՝ մինչև 7 տոկոս:

3.5 Սպասարկման գները վերանայելու առաջարկը Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին դրանց ուժի մեջ մտնելու օրվանից առնվազն 2 (երկու) ամիս առաջ, հակառակ դեպքում տվյալ առաջարկը ներկայացնելու օրվանից երկու ամսվա ընթացքում Պատվիրատուն շարունակում է Կատարողին վճարել մինչ այդ գործող սակագներին համապատասխան:

4 Կատարողի պարտավորությունները

4.1 Ժամանակին և որակով կատարել պայմանագրի առարկան կազմող աշխատանքները՝ հաշվի առնելով Պատվիրատուի պահանջները:

4.2 Կատարել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող փոփոխությունները ողջամիտ ժամկետներում:

4.3 Պահպանել պայմանագրով նախատեսված աշխատանքների իրականացման ընթացքում հայտնի դարձած՝ Պատվիրատուին վերաբերող տեղեկությունների գաղտնիությունը:

4.4 Պայմանագրային աշխատանքներ [illegible]

նմանատիպ այլ ներքին կարգերը, որոնք առնչվում են Պայմանագրային աշխատանքների հետ:

4.5 Կատարողը կարող է մուտք գործել Պատվիրատուի գրասենյակում տեղադրված Համակարգ՝ միայն Պատվիրատուի հետ համաձայնեցված կերպով: Դա վերաբերում է ինչպես Պատվիրատուի գրասենյակում, այնպես էլ հեռահար իրականացվող աշխատանքներին:

4.6 Համակարգի շահագործման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման (Windows, MS SQL Server, MS Office, և այլն) նկատմամբ պահանջների փոփոխման դեպքում Կատարողը պարտավոր է Պատվիրատուին տեղեկացնել նախօրոք. այնպես, որ Պատվիրատուն ժամանակ ունենա այդ փոփոխությունները իրականացնելու համար:

4.7 Կատարողը Համակարգի նոր տարբերակների հետ մեկտեղ Պատվիրատուին է հանձնում այդ տարբերակներին համապատասխանող սկրիպտային ծրագրերը՝ բաց կոդերով, ինչպես նաև այդ տարբերակին համապատասխանող տեղադրման փաթեթը:

5 Պատվիրատուի պարտավորությունները

5.1 Մասնակցել խնդիրների դրվածքը որոշելուն:

5.2 Կազմակերպել կատարված աշխատանքների ընդունումը:

5.3 Ժամանակին տրամադրել աշխատանքները կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական և ֆինանսական միջոցները:

5.4 Պատվիրատուն տեղեկացնելու է Կատարողին իր անվտանգության, անցագրային ռեժիմի, աշխատաժամերի և նմանատիպ այլ ներքին կարգերի վերաբերյալ, եթե այդպիսիք կան, և անմիջականորեն առնչվում են Պայմանագրային աշխատանքների հետ: Պատվիրատուն վերահսկում է Կատարողի գործողությունների համապատասխանությունը նշված կարգերին:

5.5 Ապահովել Համակարգի գործունեության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և ծրագրային ապահովումների համապատասխանությունը Կատարողի կողմից ներկայացված պահանջներին:

5.6 Պատվիրատուն պետք է նախապես խորհրդակցի Կատարողի հետ այն խնդիրների վերաբերյալ, որոնց լուծումը կպահանջի Կատարողի մասնակցություն:

5.7 Չփոխանցել Կատարողի կողմից տրամադրված ծրագրերը երրորդ կողմի:

6 Պատվիրատուի իրավունքները

6.1 Պայմանագրով նախատեսված աշխատանքների վերահսկման նպատակով (տեխնիկական անվտանգություն, ծրագրերի մշակման և տեստավորման գործընթաց և այլն) Պատվիրատուն իրավունք ունի Կատարողից պահանջել համապատասխան գործընթացների վիճակի պարզաբանումներ: Լրացուցիչ մոնիտորինգի անհրաժեշտության դեպքում Պատվիրատուն, Կատարողի հետ համաձայնեցված կարգով, իրավունք ունի այցելել Կատարողի գրասենյակ և տեղում պարզել իրեն հետաքրքրող հարցերը:

6.2 Պատվիրատուն իրավունք ունի իր գրասենյակի տարածքում Համակարգի օգտագործողի կարգավիճակով հասանելիություն տրամադրել երրորդ կողմի (վերահսկող մարմիններ, արտաքին դիտորդներ, հրավիրված խորհրդատուներ, հաճախորդներ) ներկայացուցիչներին՝ Համակարգի օգտագործողի կարգավիճակով ցանկացած աշխատանքներ իրականացնելու համար:

7 Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագրից բխող յուրաքանչյուր երկկողմանի կնքված արձանագրություն հանդիսանում է սույն պայմանագրի անբաժան մասը:

7.2 Աշխատանքի ընթացքում, Կողմերի փոխադարձ համաձայնությամբ, հնարավոր են ցանկացած պայմանների փոփոխումներ, որոնց մասին կազմվում են երկկողմանի համաձայնագրեր:

7.3 Կատարողի պատասխանատվությունը սահմանափակված է միայն ուղղակի վնասով, որը արդյունք է Պայմանագրի առարկա հանդիսացող ծառայությունների

մատուցման և աշխատանքների կատարման ընթացքում Կատարողի անձնակազմի կողմից Պայմանագրով նախատեսված պարտավորությունների դիտավորյալ կամ անփույթ խախտման: Կատարողը ոչ մի դեպքում պատասխանատու չէ Պատվիրատուին կամ որևէ երրորդ կողմին հասցված անուղղակի, հետևանքային, պատահական վնասի կամ տուժանքի, կորստի կամ ծախսերի համար (ներառյալ, առանց սահմանափակումների, բաց թողնված օգուտը)՝ անկախ մեղքի ձևից, նույնիսկ եթե Կատարողը նախապես զգուշացվել է դրանց առաջացման հնարավորության կամ գոյության մասին: Ամեն դեպքում, Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման հետ կապված պարտավորությունների համար առավելագույն պատասխանատվության չափը սահմանափակված է տվյալ ամսվա սպասարկման դիմաց վճարված գումարի 20(քսան) տոկոսով:

7.4 Սույն պայմանագրի կատարման հետ կապված հարցերը Կողմերը կձգտեն լուծել բանակցությունների միջոցով: Կողմերի միջև համաձայնության չգալու դեպքում, վիճելի հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.5 Սույն պայմանագիրը կազմվում է 2 (երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր Կողմին մեկական օրինակ:

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ	«Հայաստանի Հանրային Հեռուստա-ընկերություն» ՓԲԸ
հ/հ՝ 1570011205730100 «Ամերիաբանկ» ՓԲԸ	հ/հ՝2470102796740000 «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ
Իրավ.հասցե՝ ք.Երեւան, Չարենցի փ. 1	Իրավ.հասցե՝ ք.Երևան,Գ.Հովսեփյան 26,Նորք 0047
Գործ.հասցե՝ ք. Երեւան, Չարենցի փ. 1	Գործ.հասցե՝ ք.Երևան,Գ.Հովսեփյան 26,Նորք 0047
ՀՎՀՀ՝ 00807555	ՀՎՀՀ՝ 01540062
Տնօրեն	Գործադիր տնօրեն
Ա. Խաչատրյան	Մ.Գրիգորյան

Արձանագրություն 1

Պայմանագրային արժեքի համաձայնեցման վերաբերյալ

ք. Երևան

"09" հունվար 2014թ.

Մենք, ներքոստորագրյալներս, Կատարողի անունից «Հայկական Ծրագրեր» ՍՊԸ տնօրեն Ա. Խաչատրյանը, Պատվիրատուի անունից «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ տնօրեն Մ.Գրիգորյանը հաստատում ենք, որ Կողմերը եկել են համաձայնության "09" հունվար 2014թ. կնքված N2014/0109 պայմանագրի գնացուցակի վերաբերյալ (գները նշված են ՀՀ դրամով):

N	Անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդամենը
1	«ՀՕ-Ձեռնարկություն» համակարգի տեղադրում (սերվերի մաս + 7 օգտագործման լիցենզիա)	2,595,100	519,020	3,114,120
2	Ներդրման աշխատանքներ	6,917,600	1,383,500	8,301,000
3	Սպասարկման աշխատանքներ			
	«ՀՕ-Ձեռնարկություն» համակարգի սպասարկում (ամսական)	68,750	13,750	82,500
	Յուրաքանչյուր օգտագործման լիցենզիայի համար (ամսական)	15,000	3,000	18,000

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ

Տնօրեն

Ա. Խաչատրյան

«Հայաստանի Հանրային Հեռուստա-ընկերություն» ՓԲԸ

Գործադիր տնօրեն

Մ.Գրիգորյան

Արձանագրություն 2

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ և «Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն» ՓԲԸ միջեւ կնքված N2014/0109 պայմանագրով նախատեսվում է ներդնել «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգը հետեւյալ կոնֆիգուրացիայով՝

- Հաշվապահություն
- Հիմնական միջոցներ
- Ապրանքանյութական արժեքներ
- Աշխատավարձ
- Կադրեր

1. Հաշվապահություն

- Նկարագրում է հաշվեկշռային, արտահաշվեկշռային, բյուջետային, օգտագործողի կողմից նկարագրվող հաշիվները և գործընկերների քարտարանը
- Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝
  Դրամային և արտարժույթային հիշարար օրդերներ
  Արտարժույթային մնացորդների վերագնահատման հանձնարարագրեր
  Արտարժույթի փոխարկում
  Դրամարկղի մուտքի և ելքի օրդերներ
  Բանկային մուտքեր և ելքեր, վճարման հանձնարարականներ
  Վաճառքի և գնման պայմանագրեր
  Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր
  Կանխիկի և փոխանցման վճարման կարգադրություններ
  Փոխմարման կարգադրություններ

- Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝
  Մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը դրամով և արտարժույթով՝ ըստ կուտակիչ հաշվի, ըստ գործընկերոջ, ըստ հաշիվ-ապրանքագրերի և ըստ պայմանագրերի
  Կոնկրետ հաշվի կամ գործընկերոջ շարժը – (Т-հաշիվ), իսկ արտարժութային հաշվի համար նաև Т-համարժեքը
  Գործառնությունների մատյան դրամով և արտարժույթով
- Կազմում է ֆինանսական հաշվետվության ձևերը (Ձև1 – Ձև5)

2. Հիմնական միջոցների հաշվառում

- Ձևավորում է հիմնական միջոցների քարտարանը
- Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝
  Ընդունման-հանձնման ակտեր
  Ներքին տեղաշարժի փաստաթղթեր
  Լուծարման ակտեր
  Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր
  Վերանորոգման և վերագնահատման կարգադրություններ
  Կառուցման ծախսումներ
  Գույքագրման տեղեկագրեր
- Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝
  Տեղեկանք քարտարանի մասին ըստ հիմնական միջոցների տեսակների, բաժինների, պատասխանատու անձերի և կուտակիչ հաշիվների
  Տեղեկանք մաշվածքի վերաբերյալ
  Գործառնությունների մատյան

3. Ապրանքանյութական արժեքներ

- Վերահսկում է օգտագործողների հասանելիությունը պահեստներում մնացորդ դիտելու, մուտքեր կամ ելքեր կատարելու համար
- Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝
  Նյութական արժեքների մուտքի և ծախսի օրդերներ
  Պահանջագրեր
  Վաճառքի և գնման հաշիվ-ապրանքագրեր
  Հավելյալ ծախսերի բաշխում՝ տարբեր մեթոդներով
  Լիազորագրեր
  Գույքագրման համեմատական ցուցակներ
  Վերագնահատման և միջինացման կարգադրություններ
- Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝
  Քանակա-գումարային մնացորդների վիճակը և շրջանառության տեղեկագրերը՝ ըստ պահեստների, նյութական արժեքների և խմբաքանակների
  Կոնկրետ նյութական արժեքի շարժը – (Т-հաշիվ)
  Գործառնությունների մատյան՝ պահեստներով, նյութական արժեքներով
  Մուտքի / ելքի մատյան՝ խմբավորված ըստ մատակարարների / գնորդների

4. Աշխատավարձ
- Ձևավորում է անկետային տվյալները
- Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝
  Տաբելներ
  Արձակուրդայինների և հիվանդաթերթիկների հաշվարկներ
  Պարգևավճարների և այլ հավելումների հաշվարկներ
  Հրամաններ դրույքաչափի, ստորաբաժանման կամ պաշտոնի փոփոխության վերաբերյալ
- Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝
  Վճարացուցակներ
  Հաշվարկային թերթիկներ
  Ամփոփված տվյալներ՝ ըստ հավելումների/պահումների, ստորաբաժանումների
  Եկամտային և սոցապի հաշվարկներ

5. Կադրեր
- Ձևավորում է կադրային տվյալները
- Մշակում է հետևյալ փաստաթղթերը՝
  Կադրային թերթիկ
  Հավելում/պահման հրաման
  Արձակուրդի հրաման
  Տաբելներ
- Կազմում է հետևյալ հաշվետվությունները՝
  Անձնական քարտ
  Տեղեկանք անձնական տվյալների վերաբերյալ

«Հայկական Ծրագրեր» ՍՊԸ

Տնօրեն

Ա. Խաչատրյան

«Հայաստանի Հանրային Հեռուստա-ընկերություն» ՓԲԸ

Տնօրեն

Մ.Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2018/1228

"09" հունվարի 2014թ. կնքված N 2014/0109
պայմանագրում նոր գնացուցակի հաստատման վերաբերյալ

ք.Երևան

"28" դեկտեմբերի 2018թ.

Մենք, ներքոստորագրյալներս, Կատարողի անունից Հայկական Ծրագրեր ՍՊԸ տնօրեն Գագիկ Սարգսյանը և Պատվիրատուի անունից Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ գործադիր տնօրեն Մարգարիտա Գրիգորյանը, կազմեցինք սույն Արձանագրությունը հաստատելով հետևյալը.

1. Կողմերի համաձայնությամբ "09" հունվարի 2014թ. կնքված N 2014/0109 պայմանագրում հաստատվում է նոր գնացուցակ հետևյալ բովանդակությամբ (գները բերված են ՀՀ դրամով).

N	Անվանումը	Արժեքը	ԱԱՀ	Ընդամենը
1	«ՀԾ-Զեռնարկություն» համակարգի սպասարկում (ամսական)	79,500	15,900	95,400
2	Յուրաքանչյուր աշխատանքային կայանի համար (ամսական)	16,250	3,250	19,500

2. Սույն Արձանագրությամբ հաստատված գնացուցակն ուժի մեջ է մտնում "01" հունվարի 2019թ.-ից:

3. Սույն Արձանագրությունը կնքվում է 2(երկու) հավասար իրավաբանական ուժ ունեցող օրինակից՝ յուրաքանչյուր կողմին մեկական օրինակ, և հանդիսանում Պայմանագրի անբաժանելի մասը:

Կատարող
Հայկական Ծրագրեր ՍՊԸ

Տնօրեն

Գ.Սարգսյան

Պատվիրատու
Հայաստանի Հանրային
Հեռուստաընկերություն ՓԲԸ
Գործադիր տնօրեն

Մ.Գրիգորյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2020/0703

ք. Երեւան

"03" հուլիսի 2020 թ.

Հայկական Ծրագրեր ՍՊԸ ի դեմս տնօրեն Գագիկ Սարգսյանի, հետագայում՝ Կատարող մի կողմից, եւ Հայաստանի Հանրային Հեռուստաընկերություն ՓԲԸ ի դեմս գործադիր տնօրենի ժ/պ Արմեն Սարգսյանի, հետագայում՝ Պատվիրատու մյուս կողմից, կազմեցին սույն արձանագրությունը հետեւյալի մասին՝

1. Սույն Արձանագրությունը հանդիսանում "09" հունվարի 2014 թ. կնքված N 2014/0109 պայմանագրի անբաժանելի մասը:
2. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Պատվիրատուին է տրամադրվելու «ՀԾ-Ձեռնարկություն» համակարգի լրացուցիչ օգտագործման 3 լիցենզիա (ընդհանուր քանակը՝ 14 հատ)
3. Սույն Արձանագրությունը հաստատվում է երկու օրինակից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

Հայկական Ծրագրեր ՍՊԸ

Տնօրեն

Գ.Սարգսյան

Հայաստանի հանրային
հեռուստաընկերություն ՓԲԸ
Գործադիր տնօրենի ժ/պ

Ա. Սարգսյան